

ԸՆԿ. 9. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՂՈՒՅԹԸ

Ընկերներ, Լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ հրավիրված այս ժողովը, որտեղ քննարկվեցին հայոց լեզվի պատմության, լեզվաչինարարության և հայ լեզվի մաքրության մի շարք հարցեր, պետք է համարել վերին աստիճանի խրախուսելի քայլ։ Այս փաստը վկայում է, որ իրոք ակադեմիայի Լեզվի ինստիտուտը, մեր ռեսպուբլիկայի լեզվաբանները՝ լեզվաբանության վերաբերյալ բնկեր Ստալինի հանձարեղ աշխատությունների լույսի տակ փորձեր են անում հայոց լեզվի զարգացման հետ կապված հարցերը կոնկրետացնելու, ճշտելու, լեզվաբանության կարևոր խնդիրները լուսարանելու ուղղությամբ։ Չնայած այն բանին, որ գիսկուսիան վերաբերում էր լեզվի մաքրության և լեզվաչինարարության մի քանի հարցերին, բոլոր էությունը ընդարձակվեց քննարկվող հարցերի շրջանակը և ընդգրկեց մեր լեզվի ծագման, նրա զարգացման, զրարարի գնահատման և մի շարք այլ հարցեր, որոնց մասին իրոք կան դեռևս ոչ ճիշտ գնահատումներ։ Դիսկուսիան ընդգրկեց այսպես կոչված երկու աղղային լեզուների հարցը, որի ուղղությամբ նույնպես քիչ շփոթ չի ստեղծվել, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում։ Զեկուցող պրոֆ. Ղափանցյանը և ելույթ ունեցող ընկերները հատուկ ուշադրություն դարձրին մեր լեզվի մաքրության հարցերի վրա, որոնք, ես կարծում եմ, կարևոր նշանակություն ունեն։

Ես կփորձեմ մի քանի հարցերի մասին արտահայտել իմ կարծիքը։ Այստեղ բավականաչափ խոսվեց զրարարի մասին։ Պետք է ասել, որ զրարարի ծագման և գնահատման հարցը պուլցե անհրաժեշտություն է սահմանափակ քանակի լեզվաբանների համար, իմ կարծիքով այժմ ավելի քան կարևոր է զրարարի օգտագործման հարցի պարզարանումը։ Սակայն քանի որ բնկ. Ղափանցյանը իր գեկուցման մեջ և ելույթ ունեցող ընկերները բավական տեղ հատկացրին զրարարի պատմական կողմին, ես էլ ցանկանում եմ նախ այդ հարցի մասին խոսել։

Ընկ. Ղափանցյանը նշեց, որ զրարարը եղել է համաժողովրդական, խոսակցական լեզու։ Ավելի ճիշտ՝ նա ասաց, կան վկայություններ, որ հին հայերենը, նախկին զրարարի հասկանալի է եղել հայաստանի բոլոր մասերում ապրող հայերի համար, չնայած զրարարին գուրջնթաց՝ եղել են բարբառներ, որոնցով խոսել է հայ ժողովուրդը։

Ընկ. Ղափանցյանը գտնում է, որ զրարարի մահացման պրոցեսը ավարտվում է 7-րդ դարից։ Ելույթ ունեցող ընկերների մի մասը ես պաշտպանեց այն տեսակետը, որ զրարարը եղել է համաժողովրդական, խոսակցական լեզու։ Նրանք վիճարկում էին բնկ. Ղափանցյանի հետ միայն զրարարի մահացման ժամկետի հարցում։ Ոմանք այդ ժամկետը համարում են 9-րդ դարը, ոմանք՝ 11-րդ, իսկ որոշ ընկերներ՝ մասնավորապես բնկ. Վ. Առաքելյանը գտնում են, որ զրարարը առհասարակ չի մահացել։ Ինչ փաստեր էին բերում ընկերները։ Ամենից առաջ այն, որ զրարարը եղել է համաժողովրդական հայկական լեզու և դրա համար Աստվածաշունչը թարգմանվել է զրարար լեզվով, կամ այն փաստը, որ գողթան երգերի լեզուն նման է զրարարին։ Սրանք անշուշտ փաստեր են, որոնց հետ հաշվի չըստեղ չի կարելի, սակայն սրանք դեռ բավարար փաստեր չեն զրարարը

համաժողովրդական խոսակցական լեզու համարելու համար: Ես չեմ ուզում վիճարկել: Սակայն կարծում եմ, որ այդ տեսակետն ընդունելու համար մեր լեզվաբանները պետք է զիտականորեն ավելի լավ հիմնավորեն այդ թեզը, ավելի համոզիչ ապացույցներ բերեն: Յուրաքանչյուր գիտական պրոբլեմ ապացուցելու համար պետք է հավատալ ոչ միայն գիտնականների անկեղծությանը, կամ ազնիվ խոսքին, այլ պետք է համոզվել զիտական փաստերի հիման վրա: Այս դիսկուսիայում անշուշտ որոշ պարզաբանումներ եղան այդ հարցի վերաբերյալ. ցանկալի է, որ ապագայում մեր լեզվաբանները ավելի խորացնեն դրա քննարկումը և հանգեն ավելի համոզիչ եզրակացությունների: Մեր լեզվաբանները, հետագայում՝ ինչպես զրարարի, նույնպես և մեր լեզվի պատմության հարցերն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենան մի քանի կարևոր հանգամանքներ, որ հատորողակի կերպով նշում է ընկեր Ստալինը՝ լեզվաբանության վերաբերյալ իր հանճարեղ աշխատություններում: Հայտնի է, որ յուրաքանչյուր ժողովրդի լեզվի ծագման ու զարգացման հարցը պետք է անպայման կապել նախ և առաջ այդ ժողովրդի պատմության, նրա որպես ժողովրդի ձևավորման, զարգացման հարցի հետ: Ըմ կարծիքով՝ մեր լեզվաբանները փորձ չեն անում ավելի շատ օգտագործել պատմությունը և ոչ միայն հին, այլև ժամանակակից հայոց լեզվի հարցերը քննարկելիս՝ դրանք զուգակցել մեր ժողովրդի ծագման, հետագա զարգացման հարցերին: Այս երկու հարցերի ճիշտ լուծումը հնարավորություն կտա մեզ՝ մեկ կողմից լավ բացելու ժողովրդի պատմությունը, մյուս կողմից՝ ճիշտ հասկանալու մեր ժողովրդի լեզվի ծագման և զարգացման հետ կապված խնդիրները:

Երկրորդ հարցը, որը մեծապես կնպաստի հայոց լեզվի ծագման ու զարգացման խնդրի ճիշտ լուծմանը, դա մեր ժողովրդի տնտեսական ու քաղաքական կյանքի զարգացման ճիշտ ըմբռնումն է, լեզվի զարգացման պրոբլեմ նրա խաղաղած դերի բմբռնումը: Չի կարելի լեզվի հարցը քննություն առնել՝ կտրված ավյալ ժողովրդի տնտեսական-քաղաքական, կուլտուրական կյանքի զարգացման հարցերից, չի կարելի լեզվական երկվույթները բացատրել առանց դրանք հիմնավորելու ժողովրդի տնտեսական և քաղաքական կյանքի զարգացման հետ կապված փաստերով:

Ես կարծում եմ, որ եթե այս երկու հանգամանքները հաշվի առնվեն և մեր լեզվաբանները մի քիչ ավելի ընդարձակեն իրենց ուսումնասիրությունները, ավելի ճիշտ եզրակացությունների կհանգեն: Մարքսիստական պատմագրությունը մինչև այժմ ցույց է տվել, որ հայ ժողովուրդը ձևավորվել է տարբեր ցեղերի միաձուլումից: Հայ ժողովրդի պատմության դասագիրքը, որ լույս է ընծայվել վերջերս ակադեմիայի կողմից, այդ մասին եղած դասադրքերի մեծ ամենից հաջողն է: Նրա առավելություններից մեկը պետք է համարել այն, որ այնտեղ բավականաչափ ճիշտ են լուծված հայ ժողովրդի ծագման և ձևավորման հարցերը, ավելի ճիշտ կլինի ասել՝ դասագիրքը մոտենում է այդ հարցերի ճիշտ լուծմանը: Դասագրքում պաշտպանվում է այն տեսակետը, որ իշխող ցեղախումբը հայացիների ցեղախումբն էր, որի ղեկավարությունում տնտեսական և քաղաքական ավյալ պայմաններում բաղմաթիվ ցեղախմբերից ձևավորվեց մեր ժողովուրդը: Անշուշտ, երբ խոսում ենք տարբեր ցեղերի, ցեղախմբերի մասին, նկատի ունենալով հայացիներին որպես իշխող ցեղախումբ, չենք կարող անտարբեր վերաբերվել

այդ ժողովրդի լեզվին: Ճիշտ պետք է համարել ընկ. Ղափանցյանի այն տեսակետը, որ հայասցիներին լեզուն որոշ ձևափոխությունների ենթարկվելով, ժողովրդի ձևավորման պրոցեսում դարձավ իշխող լեզու: Միայն պետք է ցանկանալ, որ ընկ. Ղափանցյանը ավելի խորացնի և հիմնավորի այդ թեզը: Անշուշտ դա չի նշանակում, թե այն լեզուն, որ հայասցիներն ունեին, մեխանիկորեն դարձավ հայերեն հին լեզուն, ինչպես, ասենք՝ գրարարը: Պետք է ենթադրել, որ այդ պրոցեսում նա ենթարկվեց որոշակի փոփոխությունների, բայց պահպանեց իր կենսունակությունը: Սա հնարավոր ենթադրություն է, բայց պետք է շարունակել հետազոտությունը՝ զիտական ուսումնասիրությունները այդ ուղղությամբ:

Հայաստանի լեզուն, որպես իշխող, ազդեցիկ լեզու, դարձավ հին հայերենի հիմքը: Բնական էր, որ եթե ժողովուրդը ամբողջովին չէր խոսում այդ լեզվով, ապա ժողովրդի մի մասի համար դա հասկանալի էր: Ընդունելով հանդերձ, որ հայասցիների լեզուն եղել է ազդեցիկ և հասկանալի հին հայերի մի մասի համար, նաև որպես զործածական լեզու, պետք է միաժամանակ նշել, որ բավականաչափ կենսունակ են եղել և բարբառները: Սա անշուշտ արդյունք էր այդ ժամանակվա Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանների: Այդ տեսակետից՝ ինձ թվում է, որ որոշ բնկերներ մոռանում են հաշվի նստել մի շարք փաստերի հետ՝ կապված հայ հին պետականությունից և տնտեսական կյանքի հետ: Վերցնենք հայ պետականությունից հարցը: Հայտնի է, որ իր ժամանակին և՛ Արտաշեսյան, և՛ Արշակունյաց գինաստիայի շրջանում հայերը ստեղծեցին իրենց պետականությունը, բայց դա կարճատև եղավ: Նույնիսկ յուրաքանչյուր գինաստիայի մեջ առկա են անկման և խիստ թուլացման երևույթներ, օտար պետություն ազդեցության տակ ընկնելու փաստեր: Տիգրան 2-րդի թագավորության շրջանում Հայաստանը ձեռք բերեց ուժեղ պետականություն, բայց դրան հաջորդեց Արտաշեսյան գինաստիայի հետագա թուլացումը, որը որպես քաղաքական ֆակտոր, բացասաբար անդրադարձավ նաև կուլտուրայի և լեզվի զարգացման վրա:

Հետագայում ստեղծվեց Բագրատունիների թագավորությունը, բայց այդ փաստը արդյոք հիմք տալիս է ենթադրելու, որ դրաբարը հարատևեց մինչև 10 -- 11-րդ դարերը: Ապա ինչու չեն խոսում Կիլիկիայի թագավորության մասին, այն բնկերները, որոնք դրաբարի գոյությունը կապում են պետականության հետ: Կիլիկյան թագավորությունը նույնպես հայ թագավորություն էր, ուրեմն դրաբարը պետք է շարունակվեր նաև Կիլիկյան շրջանում: Ինձ թվում է հին պետականության պատմության այս յուրահատկությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ նաև լեզվի վրա: Վերցնենք տնտեսական կյանքի զարգացումը. ինչպիսի գիղղաղներով է զարգացել մեր տնտեսական կյանքը՝ վաղ ֆեոդալական շրջանում, արաբական արշավանքների, սելջուկների, մոնղոլների շրջանում և այլն: Տնտեսական կյանքի այս հանգամանքները չէին կարող բացասաբար չանդրադառնալ կայուն, համաժողովրդական լեզվի ստեղծման վրա:

Այնուհետև դրաբարը, կասկածից վեր է, որ պատմական որոշ ժամանակաշրջանում՝ արդեն 5-րդ դարից սկսած, ենթարկվեց խիստ արհեստականացման: Ես չեմ խոսում նրա զգալիորությունների մասին և իզուր տեղը որոշ մասնագետներ փորձում են իրենց հակառակորդներին լուսնել այն

քանով, որ իբր թե նրանք զբարար չգիտեն, դրա համար զբարարը նրանց թվում է զժվար: Մա լուրջ, զիտնականին հատուկ առարկելու ձև չէ: Համենայն դեպս զբարարը շատ լավ պիտոյոզները ևս, կարծում եմ, չեն վիճարկում, որ այն ենթարկվեց խիստ արհեստականացման և ավելի քան հեռացավ ժողովրդից, ժողովրդի խոսակցական լեզվից: Ահա այս հեռացումը չէր կարող չնպաստել նրա մահացման արագացմանը:

Ուրեմն՝ ինչպես պետք է գնահատել զբարարը. ևս կարծում եմ, որ զբարարը պետք է դիտել պատմականորեն ազդեցիկ ցեղային մի խմբի լեզուն, որը զարգացավ և պատմական որոշ շրջանում դարձավ հասկանալի, խոսակցական լեզու ժողովրդի մի մասի համար: Այս մեկ հանգամանք, երկրորդ՝ զբարարը որոշ էտապում, 5-րդ դարից սկսեց դառնալ զրոց լեզու. հենց իր կոչումից էլ այդ երևում է. իսկ հետագայում, մասնավորապես 1-րդ դարից սկսած, սուտիճանաբար ապրեց իր մահացման պրոցեսը: Գանձարդիկ, որոնք այս բանը մեխանիկորեն են հասկանում, Լեզուն մեկ-երկու տասնամյակների ընթացքում ոչ ծնվում է, ոչ ձևավորվում, և ոչ էլ մեկ-երկու տասնամյակի ընթացքում մահանում է: Լեզուն, ինչպես որ հանգես է գալիս հարատև, երկարատև ժամանակի ընթացքում, ապրում է զարգացման հարատև պրոցես, այնպես էլ մահանում է երկարատև պրոցեսի ընթացքում: Ուստի, ևս լիովին պաշտպանում եմ ընկ. Ղափանցյանի այն տեսակետը, որ մահացման այս պրոցեսը սկսվում է 7-րդ դարից: Անշուշտ այդ դեռ չի նշանակում, որ 7-րդ դարի առաջին տասնամյակում կամ երկրորդ տասնամյակում նա արդեն մահացավ: Մեզ հետաքրքրում է այդ պրոցեսի սկիզբը, որը պետք է կապել 7-րդ դարի հետ, որովհետև այդ պարում խոշոր փոփոխություններ են կատարվել և՛ հայ պետականության մեջ, և՛ տնտեսական ու հասարակական կյանքում:

Գարող են հարց տալ, թե զբարարը կարող էր համաժողովրդական լեզու չլինել, բայց լինել գրական լեզու: Գարող էր և այդպիսի փաստեր կան: Ես կարծում եմ, որ զբարարի պատմականորեն հանդես գալու վերաբերյալ կարծիքը ենթակա է մեր մասնագետ լեզվաբանների ուշադրությանը: Ինչպես այստեղ արծարծված մյուս հարցերը, այս հարցն էլ արժանի է հետագա խոր և զիտական ուսումնասիրության: Եվ միայն գիտական խորը, մարքսիստական մեթոդով պայմանավորված ուսումնասիրությունը մեզ կօգնի՝ վերջնական եզրակացության գալու այդ մասին:

Երկրորդ հարցը, որի մասին ես ուզում եմ արտահայտել իմ կարծիքը, վերաբերում է հայոց երկու նոր գրական լեզուներին: Իմ կարծիքով, սխալվում են այն ընկերները, որոնք անցյալում և այժմ որոշ ձևավորութթյուններով զարգացնում են այն տենցենցը, որ մի ժամանակ հայերը, երբ ձևավորվեցին սրպես ազգ, — այսինքն 19-րդ դարից սկսած, — ստեղծեցին երկու ազգային գրական լեզու: Իմ կարծիքով հարցի այս դրամը սխալ է և տեսական-լեզվաբանական տեսակետից, և քաղաքական առումով: Ինչու՞մ է կայանում տեսական-լեզվաբանական սխալը: Մեզ համար ամենից բարձր հեղինակությունը մարքսիզմ-լենինիզմի ուսմունքն է, Լենինի-Ստալինի ուսմունքը: Ահա այդ ուսմունքը մեզ սովորեցնում է, որ մեկ ազգը կարող է ունենալ մեկ ազգային լեզու: Ընկեր Ստալինը ազգի կարևոր հատկանիշը համարում է լեզվի ընդհանրությունը, այսինքն մեկ լեզուն: Մարքսիզմը և ազգային հարցը՝ նշանավոր աշխատության մեջ

ընկեր Ստալինը որոշակի կերպով ասում է. «Այսպես ուրեմն լեզվի բնդհանրություն, որպես ազգի բնորոշ գծերից մեկը՝ Վենդհանուր լեզու, յուրաքանչյուր ազգի համար...»։ «Զկա ազգ՝ որը միանգամից տարրեր լեզուներով խոսեր»։

Ուրեմն՝ եթե հայերը ձևավորվեցին և 19-րդ դարում արդեն համարվում էին մեկ ազգ, ապա խոսք կարո՞ղ է լինել միայն մեկ ազգային լեզվի մասին։ Ո՞րն է հայ ժողովրդի միակ բնդհանուր ազգային լեզուն։ Ահա այս հարցը կարող է փճարկման նյութ դառնալ և ոչ այն հարցը, թե երկու ազգային լեզու է եղել։ Մին է հայ ժողովրդի միակ բնդհանուր ազգային լեզուն։ Ես պաշտպանում եմ ընկ. Ղափանցյանի այն տեսակետը, որ դա արարատյան բարբառի հիման վրա ստեղծված հայ լեզուն է, որը մի ժամանակ կոչում էին արևելահայ լեզու։ Այն մշակվեց՝ հիմքում ունենալով արարատյան բարբառը, բայց իր վրա կրեց հայ մյուս բարբառների որոշակի ազդեցությունը, մեծ մասամբ նաև ռուսական կուլտուրայի և ռուսական լեզվի ազդեցությունը։ Ահա այս լեզուն է աշխարհարարը, կամ զրական նոր լեզուն, որը հանդիսանում է մեր համազգային լեզուն՝ սկսած 19-րդ դարից։ Սովետական կարգերից հետո այդ լեզուն դարձավ մեր ազգային պետական լեզուն։ Մյուս բոլոր լեզուները հայ բարբառներ են, իսկ այդպիսի բարբառներ մենք չապ ունենք. զրանք ոչ միայն խոսակցական բարբառներ են, այլև նրանց հիման վրա ստեղծվել է զրականություն։ Ահա, ես կառծում եմ, որ այդպիսի հայ բարբառներից է այսպես կոչված արևմտահայ լեզուն։ Այդ բարբառի հիմքը Պոստանդնուպոլսի բարբառն է, թե մի այլ բարբառ։ Համենայն դեպս մինչև այժմ լեզվաբանների կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա Պոստանդնուպոլսի բարբառն է, և մասամբ Զմյուռնիայի բարբառը, որ նույնպես մեծ դեր է խաղացել այդ լեզվի մշակման գործում։ Բայց միևնույն ժամանակ այդ բարբառը իր վրա կրել է օտար ազդեցություններ, ինչպես թյուրքական, հունական, ֆրանսիական և այլն։ Հիմնականում, իհարկե, մնացել է և մնում է որպես հայ լեզու, հայ բարբառ։

Որոշ ընկերներ վախ են հայտնում, որ եթե այսպես գնահատենք, նշանակում է պետք է զրկվենք այն հարուստ զրականությունից, որ ստեղծվել է այդ բարբառով։ Ինչ թվում է անտեղի է այդ վախը։ Փաստ է, որ այդ բարբառով հարուստ զրականություն է ստեղծվել, որը խոշոր ներմուծում է հայ զրականության մեջ։ Որքան էլ որոշ մարդիկ ուզենան այդ զրականությունը վերցնել մեզնից, այդ նրանց ոչ ոք չի տա, դա հանդիսանում է հայ կուլտուրայի մի մասը, մեր ժողովրդի սեփականությունը, ինչպես մեր սեփականությունն է Խիֆլիդի, Նախիջևանի բարբառով ստեղծված զրականությունը։

Ի՞նչ է տեղի ունենում այդ բարբառի հետ։ Նրան ոչ միայն չհաջողվեց, և չէր կարող հաջողվել ինքնուրույն լեզու լինել, այլ գեղքերի քերումը տարավ դեպի այդ բարբառի թուլացումը և այժմ նա ապրում է այդ թուլացման հետագա շրջանը։

Ուշագրավ է գաղութահայ պրոպրետիվ կադմակերպությունների վերաբերմունքը դեպի մեր ժամանակակից ազգային լեզուն։ Այժմ Երուզարիայում, Ռումինիայում հայկական դպրոցներում սովորում են սովետահայ գասադրքերով, մեր ծրագրերով։ Այդ երկրներում շատ հայերեն թեր-

թեր լույս են տեսնում սովետահայ լեզվով, սովետահայ դրամատուրգների գործերը բեմադրվում են մեր լեզվով, գաղութահայ պրոզերիսիվ խափերը հաստատորեն կանգնել են այն տեսակետի վրա, որ կա մի հայ լեզու, զա ժամանակակից սովետահայ լեզուն է և բոլոր միջոցներով աշխատում են դարձնել այն իրենց սեփականությունը: Այդպես է տեղի ունենում ոչ միայն նոր գեղարվեստի երկրներում, այլև մյուս հայ գաղութներում: Օրինակ՝ զուգ կարգացեք ԱՄՆ-ում ապրող բանաստեղծ Կարապետ Սիտալի գործերը, որոնց մեջ մեծ չափով օգտագործված է մեր սովետահայ գրական լեզուն:

Այս փաստը ցույց է տալիս, որ Ամերիկայի տեղիացի պայմաններում անդամ առաջավոր հայ պրոզաները աստիճանաբար իրենց լեզուն դարձնում են ժամանակակից սովետահայ լեզու: Այս բոլորը վկայում են այն, որ արևմտահայ բարբառը հետադարձում էլ ավելի կթուլանա և մեր ազգային պետական լեզուն արագորեն կդառնա տիրապետող լեզու նաև գաղութային համար:

Ընկերներ, արևմտահայ լեզուն արհեստականորեն հայոց լեզվից անջատելով, ինքնուրույն լեզու հռչակողներին, ես կարծում եմ, երկու կարգի կարելի է յաժանել, մեկ՝ այն լեզվարաններն են, որոնք ոչ շատ խորը ուսումնասիրությունների հետևանքով շտապել են այդպիսի եզրակացություններ դալ, սա նախ, դեռևս ոչ խորը մարքսիստական եզրակացություններ դալու արդյունք է. բայց կան մարդիկ, — ավելի շատ մեր երկրից դուրս, — որոնք համոզված ձևով ամեն կերպ աշխատում են արևմտահայ լեզուն հռչակել ինքնուրույն, անկախ լեզու: Նրանց չի մտահոգում արևմտահայ լեզվի բախտը, նրանք աշխատում են դրա առկա նպայման դնել քաղաքական փաստարկեր նպատակներ: Ահա այս տեսակետից՝ կարծում եմ, որ մեր լեզվաբանները այդ հարցին անդրադառնալիս պետք է նկատի ունենան նաև վերոհիշյալ հանգամանքը: Այդ կարգի «գիտականները» ինչ են հետապնդում՝ արևմտահայ լեզուն հռչակելով որպես «երկրորդ ազգային լեզու»: Նրանց քաղաքական նպատակն է արհեստականորեն բաժանել մեր ժողովուրդը երկու մասի, նրանց նպատակն է հիմնավորել, որ զոյություն ունի երկու լեզու, երկու կուլտուրա, զոյություն ունի երկու օրինատացիա: Ահա քաղաքական այն նպատակը, որը մտածված կերպով մեր «արևմտահայ» լեզվի այսպես կոչված «հովանավորները», մեր երկրից դուրս այդ հարցը առաջ քաշելով, զարգացնում են: Մեր մարքսիստ տեսարանների խրնդերն է՝ այդ հարցը ենթարկել խորը, գիտական ուսումնասիրության և իրենց ուսումնասիրությունյամբ ցույց տալ, որ մենք ունենք մեկ լեզու, որ արևմտահայ լեզուն կամ բարբառը նույնպես հայ բարբառ է, որը մեզ է պատկանում: Մենք ունենք մեկ ժողովուրդ, մեկ ազգ, մեկ ազգային լեզու — այդ ժողովրդի, ազգի ձևավորման օրրանը եղել է արևելյան Հայաստանը: մեր ազգային լեզվի ստեղծման գործում խոշոր դեր են խաղացել արարատյան դաշտի բարբառները, խոշոր դեր է խաղացել ուսական կուլտուրան, ուսական լեզուն, ուսական օրինատացիան: Սովետական Հայաստանը, սովետական սիստեմը ստեղծել է բոլոր հնարավորությունները մեր ժողովրդի կուլտուրայի և լեզվի հետագա էլ ավելի զարգացման ու ծաղկման համար:

Երրորդ հարցը, որի վրա ուզում եմ կանգ առնել, լեզվի մաքրության հարցն է։ Ելալթ ունեցող ընկերները շատ տեղին և վրդոված նշում էին, որ մեր լեզուն հաճախ անտեղի կերպով կեղտոտվում է, որ մեր պարտականությունն է պայքար մղել լեզվի մաքրության համար. բայց որպեսզի այդ պայքարը ծրագրված լինի և մտածված, նախ և առաջ անհրաժեշտ է պարզել, թե ներկա էտապում որն է ամենախոշոր վտանգը լեզվի կեղտոտման գործում. եթե այս հարցը պարզենք, հեշտ կլինի կազմակերպել պայքարը այդ վտանգի դեմ։ Ես կարծում եմ, որ առաջին վտանգը, որ սպառնում է մեր լեզվի աղավաղմանը— դա արխայիկ, կրոնական բառերի գործածությունն է, բառեր, որոնք մտնում են մեր լեզվի մեջ մասնավորապես գեղարվեստական դրականությամբ միջոցով։

Երկրորդ՝ շահագործող վերնախավի ժարգոնային լեզուկոնն է։

Երրորդ՝ գրարարի և հետաքննիչ բարբառների առատ օգտագործումը։

Չորրորդ՝ մեր լեզվին խորթ, օտար տարրերի, օգտագործումը,— ես նկատի ունեմ մեր լեզվի համար խորթ՝ թյուրքական, պարսկական, եվրոպական տարրերը։

Երեկնք մի քանի օրինակ։ Վերցնենք բնիկը՝ Վ. Խեչումյանին, Ս. Տառնդուն։ Բուք եթե նրանց գործերին ծանոթ եք, կտեսնեք, թե ինչպիսի առատություն են նրանք իրենց երկերում մտցնում կրոնական տարրերը։ Սա ֆնասում է մեր լեզվի մաքրությանը։ Անշուշտ ֆնասում է։ Վերցնենք Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկը», որը լիքն է ժարգոնային տարրերով։ Սա ֆնասում է մեր լեզվի մաքրությանը։ Անշուշտ ֆնասում է։

Վերցնենք գրաբարի հարցը. ժամանակի սղության պատճառով ես այդ հարցին չանդրադարձաւ։ Ձեր մեջ թող չստեղծվի այնպիսի տպավորություն, որ ես առհասարակ ժխտում եմ գրաբարը. նա իր ժամանակին անշուշտ խաղացել է որոշ դեր, նրա միջոցով է, որ մեզ հասել է գրավոր կուլտուրական խոշոր ժառանգություն։ Սակայն լիասա է նաև այն, որ գրաբարը պատմական որոշ ժամանակաշրջանում դրական դեր կատարելով հանդերձ, դարձավ խոչընդոտ մեր կուլտուրայի զարգացման համար և նոր աշխարհարարի հանգես գալը տեղի ունեցավ գրաբարի դեմ մղվող պայքարի ընթացքում։ Որոշ մարդիկ կարծում են, որ գրաբարը հայկական լեզվի պանծարանն է, պետք է այն բաց անել և օգտագործել, որը խոշոր դրական նշանակություն կունենա մեր լեզվի զարգացման գործում։ Մա նշանակում է մեր գրականությունը մի քանի հարյուրամյակ հետ տանել, մինչդեռ մեկ հարյուրամյակ առաջ Նալբանդյանը և Արսլյանը խոշոր ճանապարհ քայլեր են արել մեր կուլտուրայի առաջընթացի համար, պայքարելով գրաբարի դեմ։ Ես կարծում եմ, որ մեր լեզվի մաքրությանը խանգարում է գրաբարի ոչ միայն առանձին բառերի, այլև ամբողջ դարձվածքների անտեղի օգտագործումը, ինչպես այդ նկատելի է ընկ. Դ. Դեմիրճյանի աշխատություններում։ Նույնը պետք է ասել Ն. Զարյանի և Ս. Տառնդունի մասին։ Նիրազն էլ կարծեք չի ուղում հետ քնալ նրանցից այս հարցում։

Ոչ ոք չի ասում, թե մեր լեզուն իր մեջ չունի գրաբար դարձվածքներ։ Ունի, և դա դարձել է մեր ժողովրդի սեփականությունը, դա մեր պրական ժամանակակից լեզվի ֆոնդն է, դրանցից մենք չենք հրաժարվում։ Խոսքը վերաբերում է այն բանին, որ պատմական ժամանակաշրջանում, սոցիալիստական տնտեսության զարգացման պայմաններում գրաբարը այլևս

չի կարող արտահայտել մեր զարգացման մտածողությունը, մեր քաղաքական մտքերը: Վարժում եմ, որ ճիշտ են այն ընկերները, որոնք քննադատում են մեր այդ զրոգներին և քննադատում են այն բանի համար, որ զրանով ոչ միայն ֆեասում են իրենց երկերին, այլև մեր լեզվին, նպաստում են նրա ազավաղմանը:

Վերջապես բարբառի հարցը: Բարբառի դործածությունը չի նպաստում մեր լեզվի մաքրությունը: Ես չեմ ուզում շատ օրինակներ բերել, ինչպես խոսվեց Պաշտիկ Դաշտենցի «Պողեգան» գործի մասին, դա մի ցայտուն օրինակ է, որը ցույց է տալիս, թե ինչպես բարբառներին գերի դառնալը կեղտոտում է լեզուն և արժեքազրկում գեղարվեստական գործը:

Սրանք են այն պատճառները, որոնց հետևանքով ազավաղվում է լեզուն: Եթե ուզում ենք պայքարել մեր լեզվի մաքրության համար, պետք է պայքարենք այս թերությունները ուղղելու, այս սխալները վերացնելու համար: Ես կարծում եմ, որ այս կարգի սխալներ կատարվում են և մեր «եսպերիկական» թերթերում, ռադիո կոմիտեի հաղորդումներում՝ մեր խոսակցական լեզվում՝ սկսած Պետական համալսարանի լսարաններից, վերջացած առօրյա խոսակցությունը: Ինչ ընդունված էր, պետք է պայքար ծավալել մեր լեզվի մաքրության համար: Պատահական չէր, որ Հայաստանի բոլորականների պարտիայի 15-րդ համագումարը իր որոշումների մեջ հատուկ խնդիր դրեց մեր լեզվաբանների առաջ, մեր ամբողջ ինտելիգենցիայի առաջ՝ ամենօրյա զրգամունքի նյութ դարձնել հայոց լեզվի մաքրության հարցը: Բայց որոշ ընկերներ իրենց ելույթներում չանդրադարձան դրան: Ես այն տպավորությունը ստացա, որ այդ ընկերները, երբ խոսում էին լեզվի մաքրության մասին, կարծեք վախենում էին ուսական լեզվից: Սա քաղաքական սխալ է: Ռուսական լեզուն մեր լեզվի համար փառնալիք էր մեր հանդիսացիլ և չի կարող հանդիսանալ: Ռուսերենից մեր լեզուն կատարել է միայն որոշ բառերի փոխառություն, իսկ դա հանդիսանում է միանգամայն բնական երևույթ: Դա, ես կասեի, նույնիսկ այժմայն մեր լեզվի զարգացման համար անհրաժեշտություն է, և ոչ միայն մեր լեզվի, այլև Սովետական Միության մյուս ժողովուրդների լեզվի համար: Ինչ կերպ չի էլ կարող լինել: Բնական էլ արտահայտվում է ողջ ժողովրդի և նրա կուլտուրայի առաջատար դերը՝ սովետական ժողովուրդների կուլտուրայի զարգացման գործում: Այդ հարուստ առաջավոր լեզուն չի կարող չանդրադառնալ մեր լեզվի վրա: Եվ միանգամայն զարմանալի է, որ որոշ ընկերներ իրենց պայքարի փոխանակ ուղղելու լեզուն կեղտոտող հիմնական պատճառների դեմ, հիմնական հարց դարձրին այն, թե պետք է գործածել սովետ, պարտիա, ռևոլուցիա և այլ բառեր: Ես բոլորովին նպատակ չունեմ պաշտպանության տակ վերցնել օբյեկտիվաբանական Կոմիտեի գործունեությունը, բայց վերցրեք սովետ բառը: Որոշ ընկերներ եթե ցանկանում են նախապատվություն տալ խորհուրդ բառին, նրանք նկատի չեն առնում մի հանգամանք, այն, որ սովետ բառը չունի նեղ իմաստ, արտահայտում է մի ամբողջ քաղաքական իմաստ: Եվ պատահական չէ, որ մեր պոեզիային գեղեցիկ ուղեկցիայի առաջին օրերին իրավացի կերպով ասում էր՝ «սովետը եկավ», «Սովետի երկիր», «Սովետական իշխանություն»: Ինչպես և նշված մյուս բառերը: Ուրեմն այդ բառերը պետք է

մնան մեր լեզվի մեջ և գործածվեն, որովհետև նրանք ավելի ճիշտ են արտահայտում պահանջված իմաստը:

Ընկերներ, ես զտնում եմ, որ մենք համարձակ կերպով պետք է օգտագործենք ուսական այն բառերը, որոնք կհամապատասխանեն մեր լեզվի կառուցվածքին:

Այս զիստուտը մեր լեզվաբանության և առհասարակ լեզվի բնադավառում աշխատող գիտնականների համար ունեցավ կարևոր նշանակություն: Ես առաջարկություն եմ մտցնում, որ Լեզվի ինստիտուտը հետագայում ևս շարունակի այս լավագույն նախաձեռնությունը՝ ավելի կոնկրետ հարցերի վերաբերյալ: Միայն մտքերի համարձակ և սուր բախումն է, որ կարող է օգնել մեզ՝ լուծելու բաղժաթիվ հարցեր: Այդ տեսակետից չպետք է խուսափել և վախենալ մտքերի սուր բախումից: Բայց ասելով սուր բախում, չպետք է հասկանալ այնպիսի բախում, ինչպիսին տեղի ունեցավ որոշ ընկերների միջև: Խոսքը վերաբերում է նախ և առաջ ընկեր է: Աղայանին, Հայտնի է, որ ընկ. Ղափանցյանի զեկուցման մի շարք դրույթները ենթակա են վիճարանության: Բայց մի՞թե հարկավոր էր, որ պեսդի ընկ. Աղայանը շեղվեր սկզբունքային հարցից և ամեն կերպ աշխատեր ընկ. Ղափանցյանի զեկուցումը անհիմն կերպով տրատավորել: Եվ հետո մտածում ենք, թե ինչու մեր լեզվաբանությունն ինքնագավառում այսպիսի խոշոր արատներ կան: Բրա պատճառներից մեկն այն է, որ մեր որոշ լեզվաբաններ թեկզանդամ են դարձել, զոհ մառականությունը, իսկ սի մասի մեջ էլ չի ստեղծվել սովորական գիտնականին հատուկ վերաբերմունք, անկեղծություն—կոլեգիալ աշխատանքի ձգտում:

Ես կարծում եմ, որ Լեզվի ինստիտուտի, Պետական համալսարանի, մեր ինստիտուտների ղեկավարների հիմնական խնդիրն է՝ առողջացնել այդ մթնոլորտը:

Իմ երկրորդ առաջարկությունն այն է, որ Լեզվի ինստիտուտը և համապատասխան ամբիոնները մեկ անգամ ևս վերանայեն իրենց գիտահետազոտական աշխատանքի թեմաները, այդ թեմատիկ պլաններում մտցնեն կոնկրետ հարցեր և ընկեր Ստալինի ուսմունքի լույսի տակ մշակեն հայ լեզվաբանության հիմնական պրոբլեմները:

Եվ վերջապես՝ ես կարծում եմ, որ Լուսավորության մինիստրությունը պետք է հաշվի առնի այս մտքերի փոխանակությունը և ավելի լրջորեն դրադվի մեր դպրոցների դասագրքերի, ծրագրերի կազմման, վերակազմման և վերահրատարակման հարցերով:

Ընկերներ, մեր լեզվաբանները իրենց ձեռքի տակ ունենալով ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունները, արմատապես կվերակառուցեն լեզվաբանությունն և ընդհանուր առմամբ աշխատանքները և ձեռնամուխ կլինեն ՀԿ(Բ)Պ Կենտկոմի 15-րդ համագումարի որոշումների կենսագործմանը՝ հայոց լեզվի մաքրության վերաբերյալ: (Մափահարություններ):